Մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի «Վերնաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ) թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվելու է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատված <<**Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ**>>-ի պահանջներին համապատասխան:
Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը (այսուհետ՝ մասնակից):
Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝
1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է մասնակցին:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են **2023 թվականի օգոստոսի 23-ից 6-ը ներառյալ**՝ յուրաքանչյուր օր, ժամը 10:00-ից 15:00-ն ընկած ժամանակահատվածում, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 15:00-ին**,
ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոցում. հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր, գյուղ Վերնաշեն, փողոց 8, շենք 2:
Տեղեկությունների համար զանգահարել 028122488, 077923436 հեռախոսահամարներով կամ համապատասխան հաղորդագրություն ուղարկել vernashen@schools.am էլեկտրոնային փոստի հասցեին: